

Գերմանիոյ Գուլիկմիս կայսեր գործաւորաց դասուն վիճակը բարոյեկելու համար բրած մեծանձն ու խոյնմ առաջարկութիւնն այս ամուռն ամենանշանակալից դէպքերէն մին է:

Գրեթէ տարիէ մ'ի վեր Գերմանիոյ գործաւորաց մամաւանդ աշխատներու բանտորաց մէջ մեծ շարժում կայ եւ ստէպ ստէպ քանկոնդ կ'ընէն պահանջելով որ իրենց աւուրչեն ատելնայ եւ քանելու օրական տեւողութիւնը նոսազցուի:

Այս խնդիրը թէ կայսեր եւ թէ կառավարութեան մեծ մտատանջութեան առարկայ եղած էր ճաւական ժամանակէ ի վեր, համազուած ըլլալով որ գործաւորաց խնդիրն ընկերավարական կուսակցութեան խնդիրն հետ սերտ յարաբերութեան մէջ է, եւ որչափ գործաւորաց տեգործութիւնը կ'աւելնայ, նոյնչափ ալ կը գործնայ ընկերավարականաց կուսակցութիւնն ու ազդեցութիւնը: Ընկերավարականաց տոյն վիսաակար ազդեցութիւնը, որ բովանդակ տիեզերաց համար ծանր հետեւութիւն ունի եւ պիտի ունենայ եթէ այս խնդիրը մեծ խոնձուրծեամբն ու իմաստուն մարդասիրութեամբն չլուծուի, քեկանելու եւ միւս կողմանէ գործաւորաց ստուգիւ խնդը վիճակը բարոյեկելու համար արթուն ու իմաստուն Կայսրն իր պաշտօնէնց հետ ստէպ ստէպ խորշուրդակցելով՝ կոչեց իւր պետական բարձրագոյն ժողովն ի խորհուրդ, առաջարկեց անոնց այս ծանր ու մեծ խնդիրն իւր ըովանդակ հետեւութիւններովն, խնդրեց որ ամէնքն ծանրապէս խորհին ասոր վրայ եւ իրենց հասուն որոշումներն մերձաւոր նստին մէջ ի խորհուրդ հանեն: Նոյնպէս իւր կառավարութեան միջնորդութեամբն ուրիշ եւրոպական կառավարութեանց ծանոյց իւր միտքն ու քաղճանքն, որ ըլլոր տէրութեանց պատգամաւորներէ գումարեալ ընդհանուր ժողով մը կազմել կ'ուզէ եւ այս նպատակաւ կը հրաւիրէ ամէն տէրութիւններն իրենց պատգամաւորներն որոշելու եւ առաքելու:

Արդարեւ մեծանձն, մարդասէր, արթուն ու իմաստուն վճռապետի խորհուրդն ու առաջարկութիւնն:

Մինչ ոչ այնչափ լաւատես ենք որ իսկոյն հաստատենք թէ այս առաջար-

կութեամբ նոյն ծանր խնդիրը լուծուի ու հարթուի, եւ ոչ այնչափ յոռետես, որ իսկոյն յուսահատինք, հաստատելով թէ նոյն խնդիրն այսպիսի խորհուրդներով ու առաջարկութիւններով չի կրնար լուծուիլ: Այո, իսկոյնը մեծ ու ծանր է եւ ճաւական ժամանակի դեռ կարօտ. սակայն միտ դնելը եւս որ գործաւորաց ու ընկերավարականաց խնդիրը լուծելու համար այսպիսի տիեզերական ու արմատական միջոցաց ցարդ չէր ծեռնարկուած:

Այս մեծ գաղափարն ծնանողին համար միւր յատուկ շնորհակալութիւնն կը մատուցանենք, եւ կը մաղթենք որ լիովն յաշողութիւն ունենայ, վասն զի համազուած ենք, որ եթէ երկու կողմանքն եւս մարդասիրաբար ու քրիստոնէաբար իրարու ծեռ կարկառեն, ստուգիւ համամատաւար սակաւ ժամանակի մէջ տոյն խնդիրը լուծուած ու հարթուած կը տեսնենք:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՌԵՍԻՍԻՍԻՍԻՍ

ԳՐԱԿԱՆ — Ազգաբնակչեղս առ Գեղարայ ասորի եւ պիտեղար. 49:

ԼԵՂՈՒՄԱՐԱՆԱՆԱՆ — Նոր հայազէտ մը. 53:

ՊԱՏԱՐԱՆԱՆ — Լեհաստանի ազգայնոց անցեալէն. 55:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ — Ճորոխի վրան եւ շուրջը. 59:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ 61:

ԿԵՆՍԱՆԴՈՒԹԻՒՆ — Եովսէփ Վարդան Փաշա. 62:

(Պատեկեալ):

ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ — Հետազոտութիւնը նախնեաց ռամբորդին վրայ. 64:

ՄԱՆԱՐԱՆԱՆԱՆԱՆ — Փաւստոս Բուզանդ. 68:

ԲԱՆԱՏԵՂԺՎԱԿԱՆ — Գարուն. 71: — Բառախաղ.

71: — Բառեղծում. 72: — Անեղծում. 72:

ԱՐԹԻՆԵՍԻՍԻՍԻՍ

ՏՆՏԵՍԱԿԱՆ — Զանի մը դիտողութիւնը տնային ծաղկաբուծութեան վրայ. 72:

ԱՐԹԻՆԵՍԻՍԻՍԻՍ — Անեւտրական մանրալուր. 74:

ԲԵՐԱՏԵՍԻՍ

ԱՆԶԱՆԱՐԹԻՍԻՍ — Նորագոյն ժամանակներէն գրոյց մը. 76:

ԵՍԵԻԵՍԻՍ

ՆՐԻԱՆԻՐԱՆ — Լուսանկարի ինքնագործ գործի. 79:

ՏՆՏԵՍԱԿԱՆ — Զգեստը կամ լաթը չորս անթափանցիկ ընել. 79:

ՄԱՆԱՐԱՆԱՆԱՆ — Եւրոպայի բազմամարդ քաղաքներն. 79:

ԲԵՂԵՍԻՍԻՍ ԶԵՍԻՍԻՍԻՍ 79:



ՀՐԱՏԱՐԱՆԻՉ ԵՒ ՊԱՏԱՐԱՆԱՆՈՒ ԽՐԱՏԱՐ

4. ԱՓՈՅՆԵԼ 4. ՊԱՐՈՆՉ

ՎԻՆԵՆԱ - ՄԻՒԹԵՐԵՆՆ ԶՐԱՐՆ